

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ «ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ»-Ը

Հայ բազմադարյան մշակույթի պատմության մեջ մեծ վաստակ ունի 17—18-րդ դդ. սկսանավոր գործիչ, փիլիսոփա, տրամաբան, քերական, գեղանկարիչ, աստվածաբան ու ժամագործ Հովհաննես (Մրբուզ) Ջուղայեցին: Տարօրինակ է, բայց և փաստ է, որ այդ մեծ մտածողի կյանքը, գործունեությունն ու գրավոր բազմաբնույթ ժառանգությունը մինչև օրս, ինչպես հարկն է, չեն ուսումնասիրվել ու գնահատվել: Միշտ է, Ջուղայեցու ժառանգությունն այլևայլ առիթներով, հատկապես վերջին տասնամյակներում, անդրադարձել են մի շարք հայագետներ¹, բայց և այնպես առայժմ չկա մեծագրական որևէ ուսումնասիրություն: Եվ դա այն դեպքում, երբ նման հետազոտության պահանջ դրվել է դեռևս 18—19-րդ դարերում², իսկ շուրջ 50 տարի առաջ՝ երկրորդ համաշխարհային պատերազմի ծանր օրերին, նշանավոր հայագետ Գարեգին Լևոնյանն ուղղակի գրել է. «Հայ իրականության մեջ նշանակալի անձնավորություններ են եղել, այն ևս ոչ շնտ հեռու անցյալում, որոնց մասին մենք, մեր օրերում, գրեթե տեղեկություն չունենք, և նրանք անցնում են մոռացության գիրկը. այդպիսիներից մեկն է Նոր Ջուղայում 17-րդ դարում ապրող և գործող հետոր, աստվածաբան և նկարիչ Հովհաննես վ. Մրբուզը»³: Հայ մշակույթի պատմության մեծ երախտավորի ահագանգն անգամ Հովհաննես Ջուղայեցուն, ցավոք, չի բերեց մոռացումից, և առայժմ նա հանրապի կերպով դուրս է մնում հայ մշակույթի նշանավոր գործիչների շարքից⁴:

Այս տարի լրանում է Ջուղայեցու «Քերականութիւն»⁵, թեև փոքրածավալ, բայց գիտական տեսակետից մեծարժեք աշխատության ստեղծման 300-ամյակը⁶, որի առիթով էլ տպագրության ենք պատրաստել ստորև ներկայացվող քննական բնագիրը:

¹ Տե՛ս, օրինակ, Գ. Բ. Ջահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, Երևան, 1974, էջ 150—159, Մ. Ղազարյան, Հայ կերպարվեստը 17—18-րդ դարերում, Երևան, 1974, էջ 32—50, Հ. Միրզոյան, Հովհաննես Ջուղայեցու «Գիրք սրբազանագործութեան» երկ տպագրության պատմության շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի» 1980, թիվ 3, *Логико-методологические взгляды Ованнеса Джугасци. «Философские науки»*, 1981, թիվ 2, *Ռույնը՝ Հովհաննես Ջուղայեցու հասարակական-քաղաքական հայացքները*, «Տարեգիրք»—85, Երևան, 1986, *Ռույնը՝ Հովհաննես Ջուղայեցին արվեստի մասին*, «Սովետական արվեստ», 1987, թիվ 8 և այլն:

² Տե՛ս, օրինակ, *Խաչատուր աբեղայ Ջուղայեցի*, Պատմութիւն պարսից, Վաղարշապատ, 1905, *Մեսրոպ Թադիսայան*, Գրագիտութիւն Նոր Ջուղա, «Ազգասեր», Կալկաթա, 1845, թիվ 8:

³ Գ. Լևոնյան, Հովհաննես վարդապետ Մրբուզ, «Էջմիածին», 1944, թիվ 1, էջ 29:

⁴ Տե՛ս «Հայ մշակույթի նշանավոր գործիչները (X—XVIII դարեր)», Երևան, 1978, *Մահ «Видные деятели армянской культуры (V—XVIII века)»*, Ереван, 1982.

⁵ Այն տպագրվել է «Յաղագս քերականութեան» վերնագրով (Ամստերդամ, 1711). որով մասամբ ներկանում է նրա բովանդակությունը: Հավանաբար տպագրիչն այդպես է անվանել նկատի ունենալով նրա ծավալը: Միշտ նույն ձևով նույն տպագրիչը Ջուղայեցու «Համառոտ տրամաբանութիւն» աշխատությունը, որ հրատարակել է քերականության հետ միասին, անվանել է «Յաղագս տրամաբանութեան» (տե՛ս Հ. Միրզոյան, Հովհաննես Ջուղայեցու «Համառոտ տրամաբանութիւն» աշխատությունը, «Բանբեր Երևանի համալսարանի» 1992, թիվ 3, ծանոթագրություն 1): Ի դեպ՝ գրքի վրա չի նշված ո՛չ հրատարակության վայրը, ո՛չ տպագրիչի անունը: Այդուհանդերձ, ելնելով մի շարք հանգամանքներից, մատենագիտական գրականության մեջ տպագրության վայրը համարվում է Ամստերդամը, իսկ տպագրիչը՝ Դուկաս Վանանդեցին (տե՛ս, օրինակ, Ն. Ոսկանյան, Զ. Կորկոսյան, Ա. Սավայան, Հայ գիրքը 1512—1800 թվականներին, Երևան, 1988, էջ 189—190):

⁶ Ի դեպ՝ անցյալ տարի լրացավ Հովհաննես Ջուղայեցու մեկ ուրիշ աշխատության գրության 300-ամյակը: Այդ առիթով տե՛ս Հ. Միրզոյան, Հովհաննես Ջուղայեցու «Համառոտ տրամաբանութիւն» աշխատությունը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1992, թիվ 3:

Դժբախտաբար, Հովհաննես Ջուղայեցու ողջ ժառանգության մասն նրա «Քերականությունը» ևս, ինչպես հարկն է, դեռ չի ուսումնասիրվել ու գնահատվել: Այդ տեսակետից քաջառություն է մեծանուն գիտնական Գ. Զահուկյանի «Գրաբարի քերականության պատմություն» (Երևան, 1974) աշխատությունը, որտեղ հայ քերականագիտական մտքի ընդհանուր շրջալույս պատշաճ ուշադրություն է դարձվում նաև Ջուղայեցու քերականական ըմբռնումների գնահատությանը: Գիտնականի կարծիքով Հովհաննես Ջուղայեցին, շարունակելով նախորդ դարերի հայ քերականների և հասկապես իր ավագ հայրենակից Սիմեոն Ջուղայեցու քերականագիտական ավանդները, առանձին դեպքերում կատարում է հետաքրքիր հարցադրումներ: Օրինակ, ի մասնավորի գրում է. «Մրջուզի կողմից «ենթակա» և «ստորոգյալ» ըմբռնումների ներմուծումը քերականության մեջ բեղուն գաղափար էր և զարգացվելու դեպքում կարող էր հանգեցնել շարահյուսական արդի գաղափարներին»⁷: Եւստի ձեռք Գ. Զահուկյանը բարձր է գնահատում Հովհաննես Ջուղայեցու հնչյունաբանական ըմբռնումները, գտնելով, որ «Սիմեոն Ջուղայեցու և մյուսների համեմատությամբ Մրջուզը մի քայլ առաջ է կատարում հնչյունաբանական հարցերի բնախոսական հիմունքների ուսումնասիրության մեջ. փորձելով հնչյունների ավանդական դասակարգումը ճշտել և հիմնավորել նրանց կազմման պայմաններով»⁸:

Թեև Հովհաննես Ջուղայեցու խնդր առարկա աշխատությունը մեզ է հասել թե՛ ձեռագիր (տե՛ս Մ. Մաշտոցի անվ. մատենադարան, ձեռ. թիվ 2852, էջ 329ա—352բ և թիվ 5368, էջ 349ա—367բ)⁹, թե՛ տպագիր օրինակներով, բայց և այնպես ներկա հրատարակությունը կարևորվում է այն բանով, որ նախ՝ էական տարբերություններ կան մեզ հայտնի երկու ձեռագրերի միջև, դրանցից թիվ 5368 ձեռագիրը (այսուհետև՝ А) լուրջ պակասություններ ունի թիվ 2852 ձեռագրի (այսուհետև՝ В) համեմատությամբ: Իր հերթին В ձեռագիրն արտագրված լինելով անհմուտ գրչի կողմից, գերծ չէ ակնհայտ սխալներից ու վրիպակներից: Նրանում հաճախ պակասում են նաև գլխատառերը: Նման կարգի թերություններ կան նաև А ձեռագրում: Այդ ամենը հիմք է տալիս ասելու, որ դրանցից և ոչ մեկը հեղինակային ինքնագիր չէ: Կան մեր այս եզրակացությունը հաստատող մի շարք այլ փաստեր, որոնց վրա այստեղ չենք ուզում ծանրանալ:

Երկրորդ, տպագիրը (այսուհետև՝ С), որ ըստ էության ավելի հոգեհարազատ է В ձեռագրին, նույնպես ունի առանձին թերություններ: Բացի այդ՝ այսօր այն դարձել է մատենագիտական հազվագյուտ մնուշ և անմատչելի է նույնիսկ մասնագետներին¹⁰: Թեև մեզ հաջողվել է ամերիկաբնակ հայագետ պրոֆ. Ավետիս Սանջյանից ստանալ դրա լուսապատճենը, բայց այն պակասավոր է՝ բացակայում են 11—14 էջերը:

Քանի որ թիվ 2852 ձեռագիրը համեմատաբար ավելի ծավալուն է, որից (գուցե դրան հարազատ մեկ այլ տարբերակից) իրականացվել է տպագրությունը, ուստի ներկա հրատարակության համար հիմք ենք ընդունել հենց В ձեռագիրը: Ասում ենք «գուցե դրան հարազատ մեկ այլ տարբերակից», որովհետև որքան էլ տպագիրն ավելի հարազատ է ձեռագրին, թայց և այնպես նրանում կան առանձին մտքեր ու հատվածներ, որոնք չկան մեզ հայտնի երկու ձեռագրերից և ոչ մեկում: Օրինակ, ձեռագրերում ոչինչ չի ասվում երկբարբառների ու լծորդությունների մասին, մինչդեռ տպագրում կարողում ենք. «Երկբարբառք են Ծ, ալ, եա, եօ, ոյ, իւն, որ լեղուգանելն երկձայնս երևին, որգան՝ հայր, կեսս, եօթն, ոյր, ձիւն: Եւ լծորդութիւնք են ութ. առաջին փ, բ, պ, մ, երկրորդ՝ թ, դ, տ, երրորդ՝ խ, ք, գ, կ, չորրորդ՝ ց, ձ, ծ, զ, ս, հինգերորդ՝ չ, ժ, շ, վեցերորդ՝ լ, ն, ղ, եօթներորդ՝ ջ, ճ, ութերորդ ռ, ր» (էջ 106): Իհարկե, առայժմ դժվար է ստուգապես որոշել, թե որտեղից է գալիս այս տարբերությունը, ուստի մնում է ենթադրել, որ կամ տպագրիչն օգտվել է մեկ

⁷ Գ. Զահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, Երևան, 1974, էջ 154:

⁸ Եւստի տեղում:

⁹ Ի միջի այլոց, ձեռագրերի սկզբում որպես գրության ժամանակ նշվում է 1698 թ. դեկտեմբերի 28-ը, իսկ հիշատակարաններում նույն թվականի հունվարի 24-ը: Ընդ որում, եթե ձեռագրերում վերնագրի միակ հիմնական տարբերությունն այն է, որ թիվ 2852 ձեռագրում «ամարծան յամենայնի Յոհաննես վարդապետի» դարձվածից հետո ավելացված է «յորդոյ Ջաքարիայէ», ապա բավական զգալի են հիշատակարանների միջև եղած տարբերությունները: Ասենք նաև, որ տպագիրը չունի հիշատակարան: Հնարավոր է, որ կամ տպագրիչի ձեռքի տակ եղած օրինակում այն բացակայել է, կամ, որ ավելի հավանական է, տպագրիչն ինչ-ինչ նկատառումներով պարզապես դուրս է թողել: Անշուշտ, կարող ենք բերել մեր այս ենթադրությունը հաստատող փաստարկներ, բայց կարծում ենք, ներկա դեպքում դրա անհրաժեշտությունը չի զգացվում:

¹⁰ Գ. Զահուկյանը, որ փաստորեն առայժմ միակ ուսումնասիրողն է Ջուղայեցու քերականական ըմբռնումների, այդ կապակցությամբ գրում է. «Մենք տպագիր օրինակը զրուցել չկարողացանք, ուստի օգտվել ենք ձեռագրերից» (նշվ. աշխ., էջ 151):

այլ տարբերակից, որն ունեցել է այս հատվածը, կամ ավելացրել է ինքը: Չմոռանանք, որ տպագրիչ ու բազմավաստակ գիտնական Ղուկաս Վանանդեցին նաև շնորհալի քերական էր¹¹:

Ընթերցողի գործը դուրզն-ինչ դյուրացնելու նպատակով կատարել ենք Քեռակալը.

1 Բացել ենք համատոտագրությունները, օրինակ՝ վա՛ վասն, ույ՛ որպէս, ամ՛ ամենայն, եզկն՛ եզական, յոք՛ յոքնական, հմտութե՛ հմտութեան, վեցող՛ վեցերող, քերականութի՛ քերականութիւն և այլն:

2 Ըստ անհրաժեշտության միանշանակ ենք դարձրել ուղղագրությունը: Բանն այն է, որ երբեմն հատուկ անունները գրվում են փոքրատառով, իսկ հասարակները՝ մեծատառով, կամ թե՛ հաճախ գրված է գաղտնավանկ ը-ն՝ ըսկիզբն, ըստորոգի, ըստացական, ըրունկն, ըղընկան և այլն: Նշված և նման այլ դեպքերում ղեկավարվել ենք արդի հայերենի ուղղագրական կանոններով:

3 Փոխել ենք կետադրական նշանները համաձայն արդի հայերենի կետադրության: Ընդ որում ոչ միայն առկա կետադրական նշաններից շատերը փոխարինել ենք ուրիշներով, այլև դուրս ենք հանել դրանց մի մասը և, ընդհակառակը, ավելացրել նորերը:

4 Ուղղել ենք ակնհայտ սխալներն ու վրիպակները, որոնք, անշուշտ, շատ հազվադեպ, տեղ են գտել թե՛ ձեռագրերում և թե՛ տպագրում:

5 Այն դեպքում, երբ A ձեռագրում և տպագրում գործածվում է B ձեռագրի այս կամ այն բառի հոմանիշը, նախընտրել ենք թողնել B ձեռագրի տարբերակը:

Հուսով ենք, որ ներկա հրատարակումը կարժանանա հայ լեզվաբանության պատմության մասնագետների ուշադրությանը, և Հովհաննես Ջուղայեցու քերականական ըմբռնումները կդառնան մասնագիտական հանգամանալից քննության առարկա:

Օգտվելով առիթից, խորին շնորհակալությունս եմ հայտնում ակադեմիկոս Գ. Բ. Զահուկյանին՝ քննական բնագրի պատրաստման ընթացքում ցույց տված անգնահատելի օգնության համար:

Հ. Ղ. ՄԻՐՋՈՑԱՆ

[Ք Ե Ր Ա Կ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն]

Ի Թվին Հայոց ՌՃԽԲ յամսեանն դեկտեմբերի իզ անարժան յամենայնի Յովհաննէս Վարդապետի յորդոյ Զաքարիայէ Իսպահանցոյ արարեալ Քերականութիւն՝ ժողովեալ ի բերթողաց: Օգնեա՛ սուրբ հոգի Աստուած:

5 *Քերականութիւն է արհեստ իմն հմտութեան տառից, առ ի յուղղել գրանս գրեցեալս, զաւելորդն յապաւելով և զթերին լցուցանելով: Եւ բաժանի ի նիւթս և ի տեսակաւորութիւնս:*

Յաղագս նիւթոյ

Նիւթ է իր իմն, յորոց շաղաշարութենէ բաղկանայ տեսակաւորութիւն և բաժանի յերրեակս՝ ի գիր, ի վանգ և ի բառ:

10 *Գիր է, որով ձևանայ ձայն յօդաւոր, որոյ տառ ևս ասի ըստ այնմ, որ ունի տարրումն և դասութիւն: Եւ բաժանի յերկեակս. ի ձայնաւորս և ի բաղաձայնս:*

1—4 **Ը չիք:**

2 **Ա չիք՝** յորդոյ Զաքարիայէ:

5 **Ը չիք՝** իմն, **Ա** հմտութիւն, **BC** ի ուղղել:

6 **Ը** գրիցեալս:

8 **Ե** ր **փխ** իր:

9 **BC չիք՝** լերեակս, **Ե** բառս:

10 **Ե** ցրդաւ որ **փխ** յօդաւոր:

10—11 **Ա չիք՝** որոյ... դասութիւն: **Ը** վասն տարրութեան և դասու **փխ** ըստ այնմ, որ ունի տարրումն և դասութիւն:

11 **Ա** բաժանէ:

¹¹ Այդ մասին տե՛ս Գ. Զահուկյան, *ԱԶԿ*, աշխ., էջ 172—174, 176:

Ձայնաւոր է ըստ այնմ, որ ինքեամբ ելանէ, որգոն՝ է, իսկ բաղա-
ձայն է, որ այլով, որպակ՝ պէ:

- 15 Ձայնաւորք են եօթն՝ ա, ե, է, ը, ի, ո, և օ: Եւ ի սոցանէ երկարա-
գոյնք են և անքմառք երկեակ, որգոն՝ է և օ: Իսկ բաղաձայնք են երեսուն
և մեկ՝ բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ժ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, շ, պ, ջ, ո, ս,
վ, տ, ր, ց, շ, փ, ք, ֆ: Եւ հինն վասն այնորիկ բաղաձայն ասացաւ, զի
ոչ ըստ ինքեան ելանէ, այլ այլով: Եւ ի սոցանէ անձայնք են ԺԹ, յորոց
- 20 արտադրին շունչն արգելու՝ կամ կափուցմամբ շրթանցն, կամ կոկոր-
դին, կամ ծայրիւ լեզուին: Շրթանցն, որգոն՝ բ, մ, պ, փ, կոկորդին,
հիկէն՝ գ, կ, ղ, ք, ծայրիւ լեզուին, որբար՝ դ, թ, ն, շ, ջ, տ, ձ, ժ, ց, լ:

- Եւ կիսաձայն է տասն, հիգան՝ գ, ժ, խ, հ, շ, ո, վ, ր, շ: Եւ կիսա-
ձայն է, որ ոչ է իբրև զձայնաւորս, որ յինքեանէ ելուզանէ զձայնս և ոչ
- 25 իբրև զանձայնս, որ արգելու, այլ միջի գոլով՝ արձակէ:

Եւ կրկնակ է Ը՝ գ, լ, խ, շ, շ, ջ, ո, ց: Եւ կրկնակ վասն այն ասի,
զի ունի զօրութիւն երկակաց կիսաձայնից, որպակ՝ ո, որ ունի զօրութիւն
երկակաց ըէից և ջ՝ երկակաց ճէից, գ՝ երկակաց սէից, ձ՝ երկակաց ծա-
յից: Նմանապէս և զայլսն իմա:

- 30 Եւ նայք են քառակի՝ գ, մ, ն, ր: Եւ սոսկ է տասն՝ պ, մ, կ, շ, ղ, ս,
ն, ժ, շ, ր, զի յելուզանն թուլագոյն և սղագոյն շարժէ զլեզուն, և զձայնն
կակղագոյն: Եւ զի թէպէտ ոմանք ի սոցանէ կիսաձայնք են, այլ ունին
զօրութիւն այսպիսոյ ևս ելոյ: Եւ թաւք են ինն՝ թ, խ, լ, ջ, շ, ո, ց, փ, ք:
Եւ լինն երկակի ունի զօրութիւն, զի յորժամ դնի ի սկզբան բառից, թա-
- 35 ւանայ, որպակ՝ լարեա, և յորժամ է ի մէջ բառից՝ կակղանայ և թուլա-
նայ, որբար՝ ալէլուեայ: Եւ եօթն միջակք, որգոն՝ բ, գ, դ, ձ, ղ, ճ, ժ: Եւ
միջակ վասն այն ասի, զի յերկակաց հաւասարի, քանզի թան քան զլեր-
կըն է թաւ, և լերկն քան զթաւն լերկ, որպէս՝ բենն քան զմենն և զպէ է
թաւ, և քան զխէ՝ լերկ, զիմն քան զկենն է թաւ, և քան զջէ՝ լերկ:

18 A չիք՝ ըստ այնմ:

13—14 A կրկնակ է՝ բաղաձայն է:

15 A է փիւ եօթն, AC չիք՝ և:

15—16 A երկարագոյնքն փիւ երկարագոյնք են:

16 A երեսուն փիւ երեսուն և մէկ:

18 A չիք՝ Ֆ, C այսորիկ փիւ այնորիկ:

18—19 A չիք՝ Եւ հիւնն... այլ այլով:

19 C 19 փիւ ԺԹ:

20 A արգելուն, A կապուցմամբ:

20—21 C չիք՝ շրթանցն... լեզուին:

22 A ւ-ից հետո ունի 6:

23 A Ժ փիւ տասն, C եւ կիսաձայնք 10:

24 A չիք՝ է, C ասի փիւ է, C զձայնս ելուզանէ:

25 BC զայնս փիւ զանձայնս: A միջելով, C միջի ելով փիւ միջի գոլով:

26 C ութ փիւ ղ, A չիք՝ վասն այն:

28 A թէի փիւ թէից, ճէի փիւ ճէից, B շ փիւ գ, C զայ փիւ գ, ձայ փիւ ձ

90 C չիք՝ ւ, A Ժ փիւ տասն, C տ փիւ ւ:

31 A զձայն փիւ զձայնն, B ձայնն:

33 A զարութիւն, AC այսպիսոյ, A իլոյ փիւ ելոյ, A Ժ փիւ ինն, C Թ փիւ ինն 6:

34 Եւ լիւնն թէպէտ ասար է, այլ փիւ Եւ լիւնն երկակի ունի զօրութիւն, զի, A սկիզբն:

35 AC որգան փիւ որպակ: A չիք՝ բառից:

36 C 7 փիւ եօթն, A միջակ է փիւ եօթն միջակք, C որպակ փիւ որգոն:

36—37 A Եւ միջակ է, որ փիւ Եւ միջակ վասն այն ասի, գ՝

37—38 A չիք՝ քան զլերկն... քան զթաւն:

38 A զի փիւ որպէս, A չիք՝ է:

39 C զփիւն փիւ զխէ: AB զիմ փիւ զիմն:

40 Երկբարբառք են օ. այ, ես, եօ, ոյ, իւն, որ յելուզանելն երկձայնս երևին, որզան՝ հայր, կեաս, եօթն, ոյր, ձին: Եւ լծորդութիւնք են ութ. առաջին՝ փ, բ, պ, մ, երկրորդ՝ թ, դ, տ, երրորդ՝ խ, ք, գ, կ, շորրորդ՝ ջ, ձ, ժ, զ, ս, հինգերորդ՝ շ, ժ, շ, վեցերորդ՝ լ, ն, ղ, եօթներորդ՝ ջ, ձ, ութերորդ՝ ո, ր:

45 **Յաղագս վանգի**

Վանգ է, որ ի տառէ բաղկանայ. կամ ի միոջէ տառէ, հիզան՝ է, և կամ յերկակաց, որբար՝ պօ, և կամ յերրակաց, որգոն՝ ղոս, և կամ ի քառից, որպակ՝ մարդ, և կամ ի հնգից, որզան՝ թուղթ, և կամ ի վեցից, որգոն՝ սկիզբն և կամ դուստր: Իսկ փաղառութիւն և վանգ այսու զանազանին, զի փաղառութեան կողմունքն բաղաձայնք իցեն և մէջն ձայնատրի, հիպակ՝ գան, իսկ վանգն ոչ այսպէս:

Յաղագս բառի

Բառ է, որ ի տառէ և ի վանգէ բաղկանայ, որպակ՝ Պօղոս, և յերկեակս տրամատի. է՝ որ ենթակայանայ, որզան՝ Պետրոս, և է, որ ստորոգի, հիբար՝ ընթանայ, և է՝ որ ոչ ենթակայանայ, և ոչ ստորոգի, այլ ի նոսին յարառոցի, որբար՝ յորժամ, վաղվաղ և այլ այսպիսիք, որ է մակբայ, և է, որ նախդիր լինի, որպակ՝ ի, յ, և այլ այսպիսիք, և է, որ յօդ լինի, որզան՝ ս, դ, ն, և այլ այսպիսի, և է, որ շաղկապ լինի, որպակ՝ և, և կամ իսկ և այլք սոյնպիսիք: Յայսցանեաց են, որք բառ են, որպէս՝ 60 յորժամ, և են, որ առբառ են, որպէս՝ ի, յ, ս, դ, ն և այլք սոյնպիսիք, որ յիւրաքանչիւր ի տեղուջ իւրում յայտնիցի, այսինքն՝ բառն և առբառն:

Յաղագս տեսակատրութեան

Տեսակատրութիւն է, որ զբառս ի միասին բաղձածէ և զկատարելութիւն ներտրամադրեալ խորհրդոցն յայտնէ. եթէ ունիցի բացերևութիւն, 65 բան լինի, այսինքն՝ եթէ յերրակաց պարզառութեանց՝ յանուանէ, և ի բայէ, և յէէ, որ է բացերևութիւն, և նոյնս ըստ տրամաբանութեան շարամանութիւն, նախադասութիւն և բացերևութիւն ասի, որպէս ասացի՝ մարդ է կենդանի, և թէ ոչ, ոչ ասի շարամանութիւն, նախադասութիւն,

40—44 AB չիք:

46 A չիք՝ երկրորդ տառէ:

47 C կամ թէ փխ կամ:

48 A չիք՝ առաջին և, C չիք՝ կամ:

49—50 B զանազանի:

50 B չիք՝ զի:

49—51 A Իսկ փաղառութիւն է, որ ի կողմանս ձայնատրի բաղաձայնք իցեն, հիպակ՝ զոն, իսկ վանգն ոչ այսպէս:

58—81 A ունի միայն՝ բառ է, որ ի տառէ և վանգէ բաղկանայ, որպակ՝ Պօղոս և ի յերկակս տրամատի: Է, որ ենթակայանայ և ոչ ստորոգի, այլ ի Գոսից յարառոցի, որբար՝ յորժամ, վաղ, կամ, գատ, ի, ս և այլ սոցպիսի:

56—57 B որ է մակբայ, և այլ այսպիսիք փխ և այլ այսպիսիք, որ է մակբայ:

57 C ի, յ, ց և այլք փխ ի, յ և այլք այսպիսիք:

59 B այլ փխ այլք, որ փխ որք:

60 B այլ փխ այլք:

61 C յայտնի ներերևի փխ յայտնիցի:

68—70 A ունի միայն տեսակատրութիւն է, որ զբառս ի միասին շարայարեալ բազմած և կատարելութիւն իրաց բացերևոցէ և մասունքն են սորա երկեակ՝ անուն և բայ, յորոց բաղադրութեանց բան կազմի:

68 B զբառ փխ զբառս:

65 C եւ թէ փխ եթէ:

66 C որոյ ասի փխ որ է:

բացերևութիւն, այլ սոսկ տեսակաւորութիւն, որպէս ասասցի՝ մարդ ըն-
70 թանայ:

Յաղագս բանի

Բան է, որ ի նիւթոյ և ի տեսակաւորութենէ բաղազանութեանց կազ-
մի, այսինքն՝ ի պարզագոյն ենթակայէ և ի պարզագոյն ստորագիցելոյ
և ի մու միջնորդէ, որպէս՝ Պետրոս է մարդ: Ահա Պետրոս է ենթակայ,
75 որոյ ասի անուն: Եւ յորժամ ասասցի կենդանի է, է բայ, որք են մասունք
բանի, յորոց բաղազանութեանց շարամանութիւն, և նախադասութիւն,
և բան կազմի: Իսկ այլքն ի սոսա յարառոցին և են վեց՝ ընդունելութիւն,
դերանուն, յօդ, նախդիր, մակբայ և շաղկապ:

Յաղագս անուան

80 Անուն է մասն բանի հոլովական, յայտնութիւն ենթակայի՝ թարց
դիմաց և ամանակի, որբար՝ Պետրոս: Եւ բաժանի յերկեակս՝ յինքնակայս
և յայլակայս: Ինքնակայ, որբար՝ Պօղոս, և այլակայ, հիզան՝ արդար: Եւ
յարառոցին սմա վեց՝ քանակ, սեքք, ձևք, տեսակք, թիւք, հոլովք:

Քանակ երկեակ՝ հասարակ, որպէս՝ մարդ, յատուկ, որպէս՝ Պետրոս:
85 Սեքք քառեակ՝ արական, որպէս՝ ուստր, իգական՝ դուստր, հասարակ՝
զուակ, չէզոք՝ արծաթ:

Ձևք երրեակ՝ պարզ, որպէս՝ բարի, բարդ՝ բարեպաշտ, յարաբարդ՝
բարեպաշտասէր:

Տեսակ երկեակ՝ նախագաղափար, որպէս՝ Աստուած և ածանցական՝
90 աստուածական: Եւ ամենայն անուանք են նախագաղափար, իսկ ածան-
ցականացն գաղափարք են վեշտասան:

Առաջինն է նախնական, որ յարուացն և յիգացն ածանցին: Յարուացն
եան լինի, որպէս՝ Արրահամեան և յիգացն՝ ուհի, որբար՝ Տիրուհի:

Երկրորդ, ստացական, և գաղափարք են սորա երրեակ՝ ական, ունի,
95 եան, որգոն՝ հրեշտակական, արքունի, Համազասպեան:

Երրորդ, բաղդատական և գաղափար է սորա երկեակ՝ գոյն և գին,
որգոն՝ արիագոյն և սաստկագին:

Չորրորդ, գերադրական, և գաղափար է սորա մու՝ եղ, որպէս՝ զօրեղ:
Հինգերորդ, նուազական, և գաղափար է սորա երրեակ՝ ակ, ուկ, իկ,

78 A չիք՝ այսինքն՝ ի, B չիք առաջին ի, AB յենթակայէ, փխ ենթակայէ, AB ի ստո-
րագիցելոյ:

74—77 A չիք՝ Ահա Պետրոս... բան կազմի:

77 C չիք՝ առաջին և:

80 B յայտնութեան:

81 B յինքնակոյս:

82 B յայլակայն:

85 BC տեսակ:

84 A չիք՝ առաջին և երկրորդ որպէս:

85 A չիք՝ որպէս, B իբր փխ որպէս:

87 A չիք՝ որպէս:

89 A չիք՝ որպէս:

90 A չիք՝ Եւ ամենայն անուանք են նախագաղափար:

92 C 1 փխ Առաջինն է: AC ածին փխ ածանցին:

92—93 A չիք՝ Յարուացն եան լինի:

93 A չիք՝ ուհի:

94 A գաղափար է փխ գաղափարք են:

95 C Դաւթեան փխ Համազասպեան:

96 C որ գերկեակ ասարտս ունի փխ և գաղափար է սորա երկեակ:

97 C որգան փխ որգոն:

98 C սորա է փխ է սորա: A զարեղ:

99 C որ գերրեակ վերջս ունի փխ և գաղափար է սորա երրեակ:

100 որբար՝ որդեակ, քարուկ, այրիկ:

Վեցերորդ, տոհմական, և գաղափար է սորա բ՝ ցի և նի, որբար՝ հոովմայեցի, և սննդականաց, որբար՝ նռնենի:

Ծօթներորդ, պարունական, և գաղափար է սորա քառակի՝ արան, ուտ, նոց, աստան, հիսլէս՝ կուսարան, քարուտ, ծաղկենոց, Հայաստան:

105 Ութերորդ, պակասական, և գաղափար է սորա մու՝ ատ, որբար՝ ծո-
ռատ:

Իններորդ, և գաղափար է սորա մու՝ ոտ, որզան ձիթոտ:

Տասներորդ, լծորդական, և գաղափար է սորա մու՝ կից, որզան՝ պաշ-
տօնակից:

110 Մետասաներորդ, գոյացական, և գաղափար է սորա է՝ ային, եայ, ի, եղէն, ցու, տր, ոտի, որբար՝ երկնային, քարեայ, արծաթի, հոգեղէն, մահականացու, մարմնաւոր և մեռելոտի:

Երկոտասաներորդ, բայածական, և գաղափար է սորա վեց՝ ուն, ումն, ուտ, իստ, ած, եստ, որբար՝ գեղարդուն, աճումն, գալուտ, հանգիստ,

115 ստեղծուած, արհեստ:

Երեքտասաներորդ, բացական, և գաղափար է սորա մու՝ թին, որզոն՝
սրբութին:

Յորեքտասաներորդ, դասական, և գաղափար է սորա երկեակ՝ որդ,
ակ, որբար՝ երբեակ և երրորդ:

120 Հնգետասաներորդ, ընդունական, և գաղափար է սորա զ՝ ակ, օղ,
իչ, եալ, լի, լոց, որբար՝ ընդունակ, ընտրօղ, փրկիչ, ընտրեալ, ընտրելի,
ընտրելոց:

Վեցտասաներորդ, պաշտպանական, և գաղափար է սորա մու՝ պան,
որզան՝ պաշտպան:

125 Եւ յածանցելոցս է, զի կրկին ածանցին, որգոն՝ փառաւորական, ա-
ռաջնորդական և այլք:

Թիւք երկեակ՝ եզական, որպէս՝ մայր, և յոթնական, որպէս՝ մարք:

101 A մու փխ բ, չիք՝ ցի, որպակ փխ որբար:

102 C Ռիզան փխ որբար:

103 C որ քառակի եզերի փխ և գաղափար է սորա քառակի:

105 C որոց մու եզերումն գոյ փխ և գաղափար է սորա մու: C որկէն փխ որբար:

107 C ևս միոյ եզերման, Ռիբար փխ և գաղափար է սորա մու՝ ոտ, որզան: A չիք՝ ոտ:

108 C և եզերի կից փխ և գաղափար է սորա մու՝ կից: B կեց:

110 BC գոյական փխ գոյացական: C ութ փխ է: C եայ, եայ, փխ եայ:

111 A չիք՝ ոտի: Ընդամիճ եղէն ածանցը քաժամված է երկու ածանցի՝ եղ, էն, համա-
պատասխանաբար՝ զօրեղ, հոգեղէն: C արի փխ ոտի: Տարբեր է նաև ածանցների
թվարկման կարգը՝ A ային, եայ, ի, եղ, էն, տր: C ային, եայ, ի, եղեն, ցու, տր,
ոտի: C Ռիկէն փխ որբար, A քարեա, A զօրեղ, հոգեղէն:

112 A չիք՝ և մտելոտի, B չիք՝ և:

113 BC երկոտասան: C որ վեցեկի վերջանայ փխ և գաղափար է սորա վեց: A գ փխ վեց:

116 C և զմու անկանի փխ և գաղափար է սորա մու:

118 C որոյ երկեակ է գաղափար փխ և գաղափար է սորա երկեակ: A երկակ:

119 A երրորդ, երկեակ: C երրորդ, երեակ:

120 A ընդունակ: C չիք՝ է: C վեց փխ գ:

121 AC որպակ փխ որբար:

124 C Ռիկէն փխ որզան:

125 C ածանցելոցս փխ. յածանցելոցս: A ածանցուին փխ ածանցին: C Ռիպէս փխ որզոն:

128 C չիք:

127 A չիք՝ որպէս, և, որպէս:

Հորովք տասն, և ըստ սեռականին ևս բաժանեալ լինի ի տասն, որ-
զան՝ ան, եան, ին, եղ, եր, օր, ի, ոյ, այ, ու:

Յաղագս առաջնոյ եղանակին, որոյ աւարտն է ան

Ե Զ Ա Կ Ա Ն

Յ Ո Ք Ն Ա Կ Ա Ն

Ուղղական դուռն

դրունք

Սեռական դրան

դրանց

Տրական դրան, ի դուռն

դրանց, ի դրունս

135 Գործիական դրամբ

դրամբք

Հայցական զդուռն

զդրունս

Սկզբական ի դրանէ

ի դրանց

Պատմական զդրանէ

զդրանց

Ներգոյական ի դրան

ընդրունս

140 Արտագոյական զդրամբ

զդրամբք

Կոշական ով դուռն

ով դրունք:

Ընդ եղանակաւս են և այսոքիկ՝ արեգակն արեգական, բուռն բուռն,
դուռն դրան, եղէգն եղեգան, ուռնկն ունկան, թումպն թմպան, ինն ինան,
լիսեռն լիսուան, ծիծառն ծիծոռան, հիւսն հիւսան, ձուկն ձկան, մուկն մը-
:45 կան, նուռն նուան, շուն շան, ունկն ունկան, ջայլամն ջայլաման, սիսեռն
սիսուան, տուն տան, փոքրիկ փոքրկան, նակ ամենայն բայ, ածական,
անուն, որ է ումն, որպէս՝ աճումն աճման:

Յաղագս երկրորդ եղանակին,

որոյ աւարտն է եան

150

Ե Զ Ա Կ Ա Ն

Յ Ո Ք Ն Ա Կ Ա Ն

Ուղղական բնութիւն

բնութիւնք

Սեռական բնութեան

բնութեանց

Տրական բնութեան, ի բնութիւն

բնութեանց, ի բնութիւնս

Ընդ եղանակաւս են և այսոքիկ՝ անկիւն անկեան, ձիւն ձեան, մըջիւն
155 մըջեան, սիւն սեան և այլք այսպիսիք, այսինքն՝ գալուստ, հանգիստ,
ժողովուրդ և ծնունդ:

Յաղագս երրորդ եղանակին,

որոյ աւարտն է ին

128 C 10 փխ տասն: A Ժ փխ տասն: C 10 փխ տասն:

128—129 C Ռիկէն փխ որգան:

134 C դրան կամ դրանց, ի դուռն, ի դրունս:

142—147 A չիք:

144 B լեստան փխ լիստան:

144—145 C չիք՝ Ռիւն Ռիւան, ձուկն ձկան, մուկն մկան, նուսն, շուն շան, ունկն ունկան:

145 B նուան նրան: Ակնհայտ վրիպակ է, պետք է լինի՝ նուռն նուան:

145—146 C չիք՝ ջայլաման, սիստան, տան, փոքրկան:

147 C չիք՝ որ է:

146 C 2 փխ երկրորդ:

148—149 A ունի միայն՝ երկրորդ եղանակ:

149 C որ եզերի եան:

151—152 A ունի՝ սրբութիւն սրբութիւնք, սրբութեան սրբութեանց: C շփոթված են հոգնակի

ուղղակաճն ու սեռականը՝ բնութեանց բնութիւնք:

158 A չիք: C ունի՝ բնութեան կամ բնութեանց

ի բնութիւն ի բնութիւնս:

154—156 A չիք:

155 C չիք՝ մըջեան, գալուստ, հանգիստ:

157—158 A ունի միայն՝ երրորդ եղանակ:

157 C 3 փխ երրորդ:

158 C որ աւարտի ի:

Ե Զ Ա Կ Ա Ն

Յ Ո Ք Ն Ա Կ Ա Ն

- 160 Ուղղական գառն
- Սեռական գառին
- Տրական գառին, ի գառն

- դառինք
- գառանց
- գառանց, ի գառինս

Ընդ եղանակաս են և այսոքիկ՝ անձն անձին, բեռն, եղն, ձեռն, ոտն և այլք սոյնպիսիք:

Յաղագս չորրորդ եղանակին,
որոյ աստուն է եղ

Ե Զ Ա Կ Ա Ն

Յ Ո Ք Ն Ա Կ Ա Ն

- 170 Ուղղական աստղ
- Սեռական աստեղ
- Տրական աստեղ, յաստղ

- աստեղք
- աստեղաց
- աստեղաց, յաստեղս

Յաղագս հինգերորդ եղանակին,
որոյ աստուն է եր

Ե Զ Ա Կ Ա Ն

Տ Ո Ք Ն Ա Կ Ա Ն

- 175 Ուղղական ալիւր
- Սեռական ալեր
- Տրական ալեր, յալիւր

- ալերք
- ալերաց
- ալերաց, յալերս

Ընդ եղանակաս են և այսոքիկ՝ դուստր, եղջիւր, ծաղր, կայսր, համբր, մեղր, ուստր, փոքր և այլք սոյնպիսիք:

Վեցերորդ եղանակի աստուն է օր

Ե Զ Ա Կ Ա Ն

Յ Ո Ք Ն Ա Կ Ա Ն

- 180 Ուղղական մայր
- Սեռական մօր
- Տրական մօր, ի մայր

- մարք
- մարց
- մարց, ի մարս

Ընդ եղանակաս են և այսոքիկ՝ եղբայր, հայր և այլ սոյնպիսիք:

Եօթներորդ եղանակիս աստուն է ի

- 185 Ե Զ Ա Կ Ա Ն

Տ Ո Ք Ն Ա Կ Ա Ն

- Ուղղական բան

- բանք

182 A չիք: C չիք՝ գառին:

183—184 A չիք:

185—188 A ունի միայն՝ Չորրորդ եղանակ:

185 C 4 փխ չորրորդ:

186 C որ եզերի եղ:

170 A չիք: C տրական ևս յաստղ, ևս յաստեղս: Հավանաբար տեղ շահելու նպատակով տպագրիչը դուրս է բողել սեռականի ձևը: Այդ է վկայում «ես» բառը:

171—172 A ունի միայն՝ հինգերորդ եղանակ:

171 C 5 փխ հինգերորդ:

172 C որ եր եզերի:

176—178 A չիք:

177 C կայսր, դուստր, եղջիւր, ծաղր:

178 C այլ փխ այլք: B չիք՝ սոյնպիսիք:

179 A ունի միայն՝ վեցերորդ եղանակ: C վեցերորդ եղանակն օր եզերի:

183—184 A չիք:

188 C ունի՝ Ընդ այսոսիկ են հայր, եղբայր և այլք սոյնպիսիք:

184 A ունի միայն՝ Եօթներորդ եղանակ: C Եօթներորդ եղանակն ի եզերի:

Սեռական բանի բանից
 Տրական բանի, ի բան բանից, ի բան:

Ընդ եղանակաւ են և այսոքիկ՝ բուրաստան, գերդաստան, դատաստան, երեք, ընկեր, ժամանակ, իրաւադատ, լուսաւոր, խաւար, ծամակալ, կլափ, հայրապետ, ձիաստան, դեկ, ճախարակ, մակոյկ, յարկ, նշան, շառաւիղ, ոտնակապ, շար, պարզե, սարկաւազ, վարդապետ, տնանկ, մաման, հիւանդ, փակակալ, քաղաք և այլք:

Ութերորդ եղանակիս աւարտն է տյ
 195 Ե Զ Ա Կ Ա Ն Յ Ո Ք Ն Ա Կ Ա Ն
 Ուղղական ընտանի ընտանիք
 Սեռական ընտանուոյ շնտանեաց
 Տրական ընտանուոյ, ընտանի ընտանեաց, յընտանիս

Ընդ եղանակաւ են և յոթնականքս այսոքիկ՝ բաղանիք, լուալիք, կարծիք, շարիք, տանիք և այլք:

Իններորդ եղանակիս աւարտն է ու
 205 Ե Զ Ա Կ Ա Ն Յ Ո Ք Ն Ա Կ Ա Ն
 Ուղղական ժամ ժամք
 Սեռական ժամու ժամուց
 Տրական ժամու, ի ժամ ժամուց, ի ժամս

Ընդ եղանակաւ են և այսոքիկ՝ առիծ, առաւօտ, բարք, դաս, զարդ, ծով, կով, հաւ, մահ, շաքաթ, ուղտ, պահ, վարք, և այլք: Նաև այսոքիկ՝ Աբրահամ, Բարադամ, Եպիփան, Խոսրով, Ղազար, Յովհաննէս և այլք:

Տասներորդ եղանակիս աւարտն է այ
 210 Ե Զ Ա Կ Ա Ն Յ Ո Ք Ն Ա Կ Ա Ն
 Ուղղական Յոր Յորք
 Սեռական Յորայ Յորաց
 Տրական Յորայ, ի Յոր Յորաց, ի Յորս

Հոլով մասնական անուսնց
 215 Ե Զ Ա Կ Ա Ն Յ Ո Ք Ն Ա Կ Ա Ն
 Ուղղական ոմն, ոք, իմն ոմանք
 Սեռական և տրական որումն, ուրուք, իմիք ոմանց, յոմանս
 Գործիական ոմամք, իւիք ոմամք
 Հայցական զոմն, զոք, զիմն զոմանս
 220 Սկզբնական յումեմնէ յումեքէ, յիմեքէ յումանց
 Պատմական զումեմնէ, զումեքէ, զիմիքէ զումանց

- 188 A չիք:
- 194 A ունի միայն՝ Ութերորդ եղանակ:
- 194—285 C Ընդ եղանակաւ... իր լինի, հատվածը պակասում է մեր ձեռքի տակ եղած լուսապատճենում, որովհետև տպագրի բնօրինակը վնասված է՝ պակասում են 11—14 էջերը:
- 198—200 A չիք:
- 201 A Իններորդ եղանակ:
- 205—208 A չիք:
- 209 A Տասներորդ եղանակ:
- 218 A չիք:
- 214 A չիք՝ անուսնց:
- 217 A ումեմն փխ ուրումն:
- 220 B իմեքէ փխ յիմեքէ:

Ներգոյական	նումբմն, նումբք, նիմբք	նումանս
Արտագոյական	զոմամբ, զիւիք	զոմամբք

Գաղափարք սեռականին այս էր, զորս բացատրեցաւ, իսկ տրականին
 225 է երկեակ՝ վերջահոլովն ըստ սեռականին է, իսկ սկզբնահոլովն ի և ց
 լինի, իսկ ձայնաւորին՝ յ:

Գործիականին գաղափարք են հինգ՝ աւ, իւ, ով, ու և բեն, հիզան՝
 ոսկեաւ, խաչիւ, արծաթով, նախանձու, ջուրբ:

Հայցականին սկիզբն զայ լինի, վերջն ուղղականին է:

230 Սկզբնականին սկիզբն ի լինի, եթէ ձայնաւորի հանդիպի՝ յ լինի,
 իսկ վերջն՝ է կամ ոյ: Պատմականին սկիզբն զ լինի, իսկ վերջն ըստ
 սկզբնականին է: Ներգոյականին սկիզբն ի, յ, ն լինի, իսկ վերջն ըստ
 տրականին է: Արտագոյականին սկիզբն զ լինի, իսկ վերջն ըստ գոր-
 ծիականին է: Կոչականին գաղափարք են վեց՝ ծօ, քա, այ, է, ո, ով, իսկ

235 յոքնականն երրակիւ լինի՝ սէիւ, ցոիւ և քեիւ: Ուղղականին վերջն յորժամ
 երրեակ նայք լինի, այսինքն՝ զ, ն, ր, սեռականին վերջն ևս նոյն նայքն
 լինին, յորժամ նախադաս ունիցին բաղաձայնս, յուղղականումն կամ ըզ-
 հիւնն և զայսս ինչ ի տառից:

Յալագս բայի

240 Բայ է մասն բանի հոլովական՝ դիմաւոր և ժամանակաւոր, ստորո-
 գեալ միշտ յենթակայէ և զառնել և զկրել նշանակէ, որպակ՝ սիրեմ, սի-
 րիմ և դողամ:

Եւ յարառոցին սմա ութն՝ սերք, ձևք, տեսակ, թիւք, դէմք, ամանակ,
 որակ և եղանակ:

245 Սերք երրեակ. ներգործական, որպէս՝ սիրեմ, կրաւորական, որպէս՝
 սիրիմ, ընդմիջական, որպէս՝ երկնչիմ:

Ձևք երրեակ. պարզ, որպէս՝ ածեմ, բարդ, որպէս՝ մտածեմ, յարա-
 բարդ, որպէս՝ գերամտածեմ:

Տեսակ երկեակ. նախագաղափար, որպէս՝ ապրեմ և ածանցական,

250 որպէս՝ ապրեցուցանեմ:

Թիւք երկեակ. եզական, որպէս՝ սիրեմ և յոքնական, որպէս՝ սիրեմք:

Դէմք երրեակ. առաջին, որպէս՝ սիրեմ, երկրորդ, որպէս՝ սիրես, եր-
 րորդ, որպէս՝ սիրէ:

Ամանակ վեց. ներկայ, որպէս՝ սիրեմ, անցեալ անկատար, որպէս՝

225 A վերջաճոլով: A և սկզբնաճոլով փխ իսկ սկզբնայոլով: B յ փխ ց:

227 A ե փխ ճիգ:

229 A չիք՝ վերջն ուղղականին է:

230 A ունի միայն՝ սկզբնականին ի, յ լինի:

231 B ո փխ ոյ:

232 A Գերգործականին փխ Գերգոյականին:

234 A զ փխ վեց: B վերց: B և փխ ո:

236 A Գայքն: A չիք՝ այսինքն՝ զ, ց, թ:

237 A չիք՝ յուղղականումն:

237—238 A զայ փխ զճիւնն:

240 A չիք՝ ճոլովական:

241 A որ փխ առաջին և:

243 A ուք:

244 A չիք՝ և:

245—255 A չիք՝ որպէս:

254 A զ փխ վեց, A Գերկայց փխ Գերկայ:

266 **սիրէի, անցեալ կատարեալ, որպէս՝ սիրեցի, յարակատար՝ սիրեալ եմ, գերակատար՝ սիրեալ էի, ապառնի՝ սիրեցից:**

Որակ հինգ. սահմանական՝ սիրեմ, հրամայական՝ սիրեա՛, ըզձական՝ երանի թէ սիրեալ իցեմ, ստորադասական՝ եթէ կամ յորժամ սիրեալ իցեմ, աներևույթ՝ սիրել:

260 **Յղանակ քառակի. այ, ե, ի և ու, յորոց երրեակքն՝ այ, ե և ու են ներգործականացն յաւէտ և մերթ ընդմիջականացն, իսկ ինին կրաւորականացն և մերթ ընդմիջականացն կրաւորակերպից:** Իսկ եայ յորժամ հրամայականն հասանիցիս, եթէ ընդմիջականն կրաւորակերպ իցէ ի սահմանականն, որբար՝ նայիմ, յայնժամ հրամայական եաց լինի, իսկ հրա-

265 **ժարականն, որ է երկրորդն՝ իր լինի, որպակ՝ մի՛ նայիր, իսկ եթէ ընդմիջականն ներգործակերպ իցէ, հրամայականն ոչ լինի եաց, այլ՝ եա, որպէս այս, որ ի սահմանականումն ասացես՝ բողոքեմ, յայնժամ հրամայականն եա լինի, որկէն՝ բողոքեա և ոչ բողոքեաց, իսկ միւսն եր լինի, որզան՝ մի բողոքեր:**

270 **Յւ արդ՝ առաջին եղանական սյսպէս տնօրինեա. սահմանականին ներկայ ներգործական՝ լուանամ, լուանաս, լուանայ, յոքնական՝ լուանամք, լուանայք, լուանան:** Անցեալ անկատար՝ լուանայի, լուանայիր, լուանայր, յոքնական՝ լուանայաք, լուանայիք, լուանային: Անցեալ կատարեալ՝ եզական. լուացի, լուացեր, լուաց, յոքնական՝ լուանայաք, լուա-

275 **նայիք, լուանային: Յարակատար, եզական՝ լուացեալ եմ, լուացեալ ես, լուացեալ է, յոքնական՝ եմք, եք, են: Գերակատար՝ եալ, եզական՝ լուացեալ էի, էիր, էր, յոքնական՝ էաք, էիք, էին: Ապառնի՝ լուացից, լուացես, լուացէ, յոքնական՝ լուացուք, ցէք, ցեն: Հրամայականին ներկայ ներգործական, եզական՝ լուա, մի՛ լուանար, յոքնական՝ լուացէք, մի՛**

